ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» օգոստոսի 2020թ. № 219

ԱՐՇԱԿ ԴԱՎԹՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետարանի և Վրեժ Դավթյանի միջև 2004 թվականի հոկտեմբերի 15-ին կնքված, նոտարական սեղանամատյանում 1204 համարով գրանցված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալության իրավունքի տրամադրման մասին պայմանագրի ժամկետն ավարտվել է, հիմք ընդունելով անշարժ գույքի վարձակալության իրավունքի գրանցման 19.10.2004թ. թիվ 0028369 վկայականը և Արշակ Դավթյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Լուծել Սպիտակի քաղաքապետարանի և Արշակ Վրեժի Դավթյանի միջև 2002 թվականի օգոստոսի 30-ին կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալության իրավունքի տրամադրման մասին պայմանագիրը:
2. Դադարեցնել Արշակ Վրեժի Դավթյանի վարձակալության իրավունքը ավտոտնակի կառուցման համար հատկացված 24 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ:
3. Աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետ Գարիկ Աբգարյանին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել համայնքի հողային հաշվեկշռում:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. օգոստոսի 19
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» օգոստոսի 2020թ. № 220

ՍԵՆԻԿ ԲԱԲԵՐՑՅԱՆԻՆ, ՄԱՍԼԵՆ ԲԱԲԵՐՑՅԱՆԻՆ, ՌԱԶՄԻԿ ԲԱԲԵՐՑՅԱՆԻՆ, ՄԱՐԻՆԵ ՄԵՍՐՈԲՅԱՆԻՆ ԵՎ ԼԻԼԻԹ ԲԱԲԵՐՑՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14082020-06-0035 վկայականը և Ռազմիկ Բաբերցյանի ներկայացուցիչ Ռաֆիկ Մանուկյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սենիկ Բաբերցյանին, Մասլեն Բաբերցյանին, Ռազմիկ Բաբերցյանին, Մարինե Մեսրոբյանին և Լիլիթ Բաբերցյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Բանավան թաղամասում գտնվող 06-006-0061-0002 կադաստրային ծածկագրով 0,222 հեկտար մակերեսով տնամերձ հողամասին, դրա վրա գտնվող 06-006-0061-0002-001 կադաստրային ծածկագրով 188,4 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը և 06-006-0061-0002-002 կադաստրային ծածկագրով 28,56 քառակուսի մետր մակերեսով անասնաշենքին տրամադրել «քաղաք Սպիտակ, Բանավան թաղամաս, թիվ 140» հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. օգոստոսի 19
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» օգոստոսի 2020թ. № 221

ՎՐԵԺ ԴԱՎԹՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետարանի և Վրեժ Դավթյանի միջև 2004 թվականի հոկտեմբերի 15-ին կնքված, նոտարական սեղանամատյանում 1283 համարով գրանցված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալության իրավունքի տրամադրման մասին պայմանագրի ժամկետն ավարտվել է, հիմք ընդունելով անշարժ գույքի վարձակալության իրավունքի գրանցման 19.10.2004թ. թիվ 0028368 վկայականը և Վրեժ Դավթյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Լուծել Սպիտակի քաղաքապետարանի և Վրեժ Արամայիսի Դավթյանի միջև 2002 թվականի օգոստոսի 30-ին կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալության տրամադրման մասին պայմանագիրը:

2. Դադարեցնել Վրեժ Դավթյանի վարձակալության իրավունքը ավտոտնակի կառուցման համար հատկացված 24 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ:

3. Աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետ Գարիկ Աբգարյանին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել համայնքի հողային հաշվեկշռում:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. օգոստոսի 19
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» օգոստոսի 2020թ. № 222

ՄԱՐԻԱ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ «ՍՊԻՏԱԿԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, հիմք ընդունելով Մարիա Ալիկի Գասպարյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1.2020 թվականի օգոստոսի 20-ից Մարիա Ալիկի Գասպարյանին (անձնագիր AT 0372427, տրված 2020 թվականի փետրվարի 1-ին, 052-ի կողմից) նշանակել «Սպիտակի երաժշտական դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև տնօրենի թափուր պաշտոնը մրցույթում հաղթող ճանաչված անձի կողմից զբաղեցնելը, բայց ոչ ավելի, քան վեց ամիս ժամկետով:

2.Աշխատավարձը՝ համաձայն հաստատված պաշտոնային դրույքաչափի՝ 130 000 (հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ:

3. Մարիա Ալիկի Գասպարյանի համար սահմանվում է շաբաթական 6 աշխատանքային օր՝ օրական 8 ժամ ժամանակով:

4. Աշխատանքային գործառույթները՝ համաձայն աշխատանքային պայմանագրի:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. օգոստոսի 19
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» օգոստոսի 2020թ. № 223

ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի ԹԻՎ 53 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի ապրիլի 5-ի թիվ 53 որոշման կից ցուցակում Գրիգորի Նորիկի Բաղդասարյանի անունը սխալմամբ գրվել է «Գրիգոր», հիմք ընդունելով Գրիգորի Նորիկի Բաղդասարյանի անձնագիրը և դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի ապրիլի 5-ի «Սպիտակ քաղաքի Այգեստան, Շահումյան, Չարենցի և Ոփյան փողոցների բնակիչների տնամերձ հողամասերը և բնակելի տները՝ որպես վերջիններիս սեփականություն ճանաչելու մասին» թիվ 53 որոշմանը կից ցուցակի 16-րդ տողում նշված «Գրիգոր» բառը փոխարինել «Գրիգորի» բառով:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. օգոստոսի 19
ք.Սպիտակ